ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(այսուհետ՝ Հանձնաժողով)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 129

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների քարավանատան՝ Սելիմի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության ենթարկելու վերաբերյալ

Հանձնաժողովը ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների քարավանատան՝ Սելիմի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննությանը տալիս է դրական եզրակացություն:

Կառուցապատման գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Օբյեկտի տվյալները և ցուցանիշները.

1) օբյեկտի անվանումը՝ *Օրբելյանների քարավանատան՝ Սելիմի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագիծ*
2) ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ---.
3) օբյեկտի հարկայնությունը՝ ---
4) նախագծային կազմակերպության անվանումը՝ *«ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*
5) կառուցապատողի անվանումը՝ *ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն*

Հանձնաժողովի նախագահ	
	Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ. Առաքելյան

Երևան, ՀՀ քաղաքաշինության կոմիտե 23 04 2026թ.